ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-312[1]-05.08.2013,20.06.2014-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ կետը լրացնել 12^4 -րդ ենթակետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«12^4 . Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն.		
1. փորձաքննության գործընթացի իրականացման համար		
ա) նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի համար,		բազային տուրքի 500-պատիկի չափով
բ) նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի համար		բազային տուրքի 400-պատիկի չափով
գ) նախատեսվող գործունեության Գ կատեգորիայի համար		բազային տուրքի 15-պատիկի չափով»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին » և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Ծանոթություն, կատարված փոփոխությունները
1	*2*	*3*	*4*	*5*
1	ՀՀ Աժ պատգամավոր Հայկ Գրիգորյան	Ընդերքի արդյունահանման թույլտվություն տալու գործընթացում տեխնիկական առաջադրանքի տրամադրման պարտադիր գործընթացի արտցոլումը պետք է առաջացնի Ընդերքի մասին օրենսգրքում համապատասխան հոդվածներում փոփոխություններ՝ չխաթարելով մեկ պատուհանի սկզբունքը:	Ընդունվել է	Փաթեթին ավելացել է «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: